Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03 օգոստոսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ա. Սիմոնյանը, Է. Մխիթարյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի օգոստոսի 1-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ	ք. Երևան, Մոսկովյան 33/1 091 54 84 97	info@armhydroproject.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք – 28 301 900 ՀՀ դրամ ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ				

1	«Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ	27 450 000	5 490 000	32 940 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը մասնակից «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի հայտով ներկայացվել են:

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

Ընթացակարգի մասնակից «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված հայտի ապահովումը (հայտի ապահովման չափը) չի համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետով սահմանված պահանջներին, որի համաձայն Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի հինգ տոկոսին: Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը կազմում է 1 420 000 ՀՀ դրամ: Քանի որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը՝ հայտի ապահովումը պետք է կազմեր իր գնային առաջարկի 5 տոկոսը, որը կազմում է 1 647 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 8.2 կետերը՝ «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժել,

2. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-22/3-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

անդամներ _____ Գ. Մելիքսեթյան

_____ Ա. Սիմոնյան

_____ Է. Մխիթարյան

_____ Ս. Ալեքսանյան

_____ Ս. Գալստյան

Քարտուղար